եօթն այլ այսս չարագոյնս քան զինքն, և մտեալ բնակէ անդ. և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն...»: Ահա թե ինչպես է «թաքցրել» այդ զրույցը Դավրիժեցին. «Եւ մովրովս այս՝ որ յառաջնում նուագին զմի ունէր բնակեցուցեալ յինքեան ի զորացն չար այսու. և արդ՝ այսն այն առաջին, զեօթն այլ այսս չարագոյնս քան զինք առեալ ընդ ինքեան, եկեալ բնակեցաւ ի մովրովս յայս. և եղև սորայս վերջինն չար քան զառաջինն» (էջ 122): Ինչպես տեսնում ենք, սովորական ու գրեթե մշտապես գործածական հղումն Ավետարանին, նույնիսկ նշան-ցուցիչի ձևով՝ այս պարագային բացակայում է:

Ինտերտեքստը յուրովի է դրսևորվում համեմատություն-հակադրությունների մեջ: Պատմագրքի ընդգրկած ժամանակաշրջանի դրամատիկ իրադարձություններին անդրադառնալիս՝ Դավրիժեցին պատմության ընթացքի վկայագրումը պարտադիր ուղեկցում է ողբի ժանրին ներհատուկ գեղարվեստական միջոցների կիրառությամբ: Այդ կարգի հատվածների մասին խոսելիս՝ իրավացիորեն նշվում է պատմահայր Մովսես Խորենացու ազդեցության մասին: Վարագ Առաքելյանն, օրինակ, գրում է. «Նա (Դավրիժեցին–Ա.Ն.) իբրև գրող մեծ Խորենացու գրական հմայքին է ենթարկված և նրա նման էլ ողբում է Հայաստանի ու հայ ժողովրդի գլխին պայթած մեծ զուլումի առիթով»[31]: Սակայն կառուցվածքային առումով մեծ դերակատարում ունեն Աստվածաշնչի հետ ինտերտեքստուալ հարաբերությունները: Ողբալով երևույթը՝ պատմիչն ինքն է նկարագրում-պատկերում նրա նախկին (որպես կանոն՝ երջանիկ, գեղեցիկ, փառավոր) վիճակը, իսկ ներկա կացությունը, որ, բնականաբար, անցյալի սրված հակադրությունն է բոլոր մակարդակներում, ներկայացնելու համար երբեմն դիմում է նաև ինտերտեքստի օգնությանը: Բերվելիք օրինակում Դավրիժե-

---

[31] ***Վարագ Առաքելյան,*** Առաքել Դավրիժեցի (մահվան 300-ամյակի առթիվ), «Պատմա-բանասիրական հանդես», 1970, համար 3, էջ 44: